Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 818 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ԶԻՆՎԱԾ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Ինչպես «ՍՕՍ-Կինդերդորֆ Ինտերնացիոնալ» կազմակերպության, այնպես էլ Հայաստանյան «ՍՕՍ-Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի համար ռազմավարական է նաև պատերազմների, համավարակների և այլ աղետների պատճառով կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքներին և երեխաներին մարդասիրական և հոգեբանասոցիալական անմիջական աջակցության ցուցաբերումը: Այս ուղղությամբ կազմակերպությունը ծրագիր է իրականացնում Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքի վրա սեպտեմբերի 13-15-ը զինված հակամարտությունից տուժած, ինչպես նաև տեղահանված ընտանիքների և նրանց երեխաների ծանր սոցիալական և հոգեբանական վիճակը փոքր-ինչ մեղմելու նպատակով: Այս ծրագրերն իրականացվում են տեղական ինքնակառավարման մարմինների հետ սերտ համագործակցությամբ:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների օրենքներով նախատեսվող արտոնություններից:
3.	Բարեգործը և ֆինանսավորման աղբյուրը	Ծրագրի ֆինանսական աղբյուր է հանդիսանում «ՍՕՍ Մանկական գյուղեր» Նորվեգիա
4.	Ծրագրի կատարողը	Ծրագիրն իրականացնում է «ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամը (ՀՎՀՀ՝ 03517269, ՀՀ, քաղ. Երևան, Հր. Քոչարի 8 բն. 18-19):

5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Ծրագիրն իրականացվում է Գեղարքունիքի մարզի քաղաք Վարդենիսում, այն առնչվում է սոցիալական բնագավառին:
6.	Ծրագրի բյուջեն	20,452,841 դրամ
7.	Բարեգործությունն ստացողը	Ծրագրում ընդգրկված են սեպտեմբերի 13-15-ը զինված հակամարտությունից տուժած սոցիալական ռիսկի ենթակա 400 երեխաներ, 150 ընտանիքներ:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը իրականացվելու է 30.11.2022–31.01.2023 ժամանակաշրջանում:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. Ծրագրի շահառուներին նյութական աջակցության տրամադրում ընդհանուր 18 275 000 դրամ արժեքով, այդ թվում՝ 1.1. ծրագրի շահառուներին սննդի փաթեթի տրամադրում՝ 7 500 000 դրամ. 1.2. ծրագրի շահառու երեխաներին կրթադաստիարակչական պարագաների տրամադրում՝ դասապրոցեսը պատշաճ կազմակերպելու նպատակով (ներկեր, մատիտներ, գրիչներ, տետրեր, գրքեր, ծեփան, գունավոր թղթեր, սոսինձ, մկրատ, վրձիններ և այլն)՝ 2 775 000 դրամ. 1.3. ծրագրի շահառուներին սեզոնային հագուստի տրամադրում՝ 8 000 000 դրամ: 2. Ծրագրի մասնագիտական անձնակազմի (շահառուների հետ անմիջականորեն աշխատող անձնակազմի) աշխատավարձեր՝ կազմում է 580 000 դրամ (տվյալ գումարի չափով հարկային արտոնություն չի պահանջվում). 2.1. սոցիալական աշխատող՝ 580 000 դրամ, թվով 1 աշխատակից: Կազմակերպական ծախսերը նշված ժամանակաշրջանի համար կազմում են՝ 1 597 841 դրամ: Աշխատակազմի ծախսեր՝ 624 000 դրամ (որի համար հարկային արտոնություն չի պահանջվում), այլ ադմինիստրատիվ ծախսեր՝ 973 841 դրամ (մշտադիտարկման և մոնիթորինգի համար նախատեսված ծախսեր, որի համար հարկային արտոնություն չի պահանջվում):
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1. Ծրագրի շահառուներին նյութական աջակցության տրամադրում ընդհանուր 18 275 000 դրամ արժեքով, այդ թվում՝ 1.1. ծրագրի շահառուներին տրամադրելու նպատակով սննդի փաթեթի ձեռքբերում ՝ 7 500 000 դրամ. 1.2. ծրագրի շահառու երեխաներին տրամադրելու նպատակով կրթադաստիարակչական պարագաների ձեռքբերում՝ դասապրոցեսը պատշաճ կազմակերպելու համար (ներկեր, մատիտներ, գրիչներ, տետրեր, գրքեր, ծեփան, գունավոր թղթեր, սոսինձ, մկրատ, վրձիններ և այլն)՝ 2 775 000 դրամ. 1.3. ծրագրի շահառուներին տրամադրելու նպատակով սեզոնային հագուստի ձեռքբերում:

		8 000 000 դրամ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսերը 30.11.2022թ. - 31.01.2023 թ. ժամանակաշրջանի համար կազմում են 1 597 841 դրամ, որը համապատասխանաբար կազմում է բյուջեի 7,8 տոկոսը: Այդ թվում՝ աշխատակազմի ծախսեր՝ 624 000 դրամ (որի համար հարկային արտոնություն չի պահանջվում), այլ ադմինիստրատիվ ծախսեր 973 841 դրամ (մշտադիտարկման և մոնիթորինգի համար նախատեսված ծախսեր, որի համար հարկային արտոնություն չի պահանջվում):
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպությունը համագործակցելու է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունների, Հայաստանի Հանրապետության ոստիկանության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի, տեղական ինքնակառավարման մարմինների, երեխաների պաշտպանության հարցերով զբաղվող տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունների լայն շրջանակների հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի համար 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ ՀՐ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

22.11.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ